գլխաւոր պատճառներից մէկն այն է, որ սերմանման կոմիտէն հաւաքելով 250,000 փութ սերմացու՝ մօտ 200,000 փութ ալիւր բաշխեց ժողովրդին։ Երկրորդ գլխաւոր պատճառն է Ռուսաստանից ալիւր չգալը և, վերջապէս, երրորդ այն, որ Ամերիկայի ալիւր բերող նաւերը ուշացել են և յունիսի սկզբին հագիւ տեղ հասնեն։

Կարգադրուած է առաջին հերթին ապահովել զօրքի պաշարը, որ և կատարուած է արդէն, ապա որբանոցների ու հիւանդանոցների և միայն մնացածը բաշխել քաղաքացիներին, այդ պատճառով է, որ հացաբաժինը իջեցուած է քառորդ ֆունտի։

Պարենաւորման ճգնաժամի դէմ կուռելու համար ձեռնարկուած են միջոցներ. այժմ մենք հնարաւորութիւն ունենք Բաթումում գնելու բաւական քանակութեամբ գարի, հնարաւորութիւն ունենք նաև երկրից հանելու ցորեն և ալիւր։ Բացի այդ, որոշուած է շարունակել սերմանման կոմիտէի գործունէութիւնը, որը այս անգամ հացահատիկներ պէտք է հաւաքի ոչ թէ ցանելու, այլ պաշար պատրաստելու համար։

Զէկերի կուրսը բարձրացնելու հարցին կառավարութիւնը նուիրել է հինգ նիստ, մշակել է 16 միջոցներ, որոնց մէջ յիշատակելի են արտասահմանեան ծախսերի կրճատումն ու ներմուծուող ապրանքների քանակի կրճատումը, ապա որոշուած է ամէն կերպ աջակցել հում նիւթերի արտահանութեան գործին՝ այդ նպատակի համար, ամենից առաջ, տրամադրելով բաւարար թուով վագոններ։

Ընդհանուր գործունէութեան մէջ կառավարութեան ուշադրութեան գլխաւոր առարկայ են կազմում երեք խնդիրներ — Հայաստանի անկախութեան ճանաչումը, սահմանների լայնացումը և ներդաղթի կազմակերպումը։ Վերոյիշեալ խնդիրների իրագործման համար կառավարութիւնը գործ է դնում իր բոլոր միջոցները և ուժերը (բուռն ծափեր)։

Լ. Թադէոսեան. — Զեկուցում է գիւղատնտեսութեան և պետական գոյքերի նախարարութեան երկրագործական բաժնի 1920 թ. նախահաշիւի ստիպողական և յաւելեալ յօդուածների մասին։

Խորհրդարանը յօդուածների քննութիւնից յետոյ, վերոյիշեալ նախարարութեան անունով բաց է անում 3,692,709 ռ. վարկ։

Նիստը փակւում է դիշերուայ ժամը 10 և կէսին։

ՈՒԹՍՈՒՆԵՕԹԵՐՈՐԴ ՆԻՍՏ

(Մայիս 3-ի արտակարգ նիստը)

Նիստին ներկայ է կառավարութեան ամբողջ կազմը. ունկնդիրների մասն ու պատշգամբը լիքն են խուռն բազմութեամբ։

Նախագահում է Ա. Սահակեան. քարտուղարը կարդում է նոր ստացուած գործերը։

Արտաքին գործերի նախարարի հաղորդագրութիւնը

Արտաքին գործերի նախարար Հ. Օհանջանեան. — Պարոնայք պատգամաւորներ, վերջին շաբաթուայ ընթացքում Անդրկովկասի մէջ հարեւան հանրապետութիւններում, յատկապէս, Ադրբէջանում կատարւում են դէպքեր, որոնք առանձնապէս հետաքրքրական են և անմիջականօրէն վերաբերում են մեր կենսական շահերին. այդ դէպքերի նկարագրութիւնն է, որ պէտք է անեմ այսօր։